

« Կը փակեն հատորը, 683 իջն մինչեւ ի 697, երկու ցանկը, մին՝ լատին եւ փասնի անուանց, միւսն՝ արաբ եւ տաճիկ բառերու. մենք եւս կը թողունք զայն, շնորհակալ լինելով հեղինակին իւր երկար եւ արդիւնաւոր աշխատութեան համար, եւ իրեն եւ զբէրն կ'ըսենք, բարեւաւ տեսութիւն » :

Հ. Յ. Թորոս.

ՆՄՈՅՇ ՄԸ ՀԱՅ ԿԵՆԳԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ

(Շար. տես յէջ 188)

**Յ**ԱՐԳԱՆՔ մտանքն զիտելու հայրենաց ամենէն վաղեմի եւ խորհրդաւոր հաւելիք, Աղաւնին :

— Սա է որ նոյեան տապանին ահարեկ ապաստանելոց՝ ձիթենոյ ճիւղ մը ի կրացին՝ հաշտութիւն կ'աւետէ եւ խաղաղութեան դուռը կը բանայ :

— Արդ իւր պաշտօնը մտացած է, նոյն խաղաղանիշ ճիւղը թողուցած է իւր կողէն եւ քաշուած անտառներուն մէջ, ուր կ'ողբայ մեղամաղձիկ վաւուներով իւր սիրուն հայրենաց սրտամաղձիկ կսկիծները, Աղաւնունեաց մեծ ցեղին շիջումը, եւ մերթ՝ իւր մեղուշ աչուրները վկայ ի զուարթ երկինքը պիշ ունելով՝ շնորհակալիս կ'ուզէ առ Նարեկացին Գրիգորիս, որ յարութիւն պարգեց իրեն՝ երբ խորովեալ՝ կեր պիտի լինէր անոր հիւրոց :

— Հայրենիք տակաւին ջերմ սիրով կը գործարայ ասոր վրայ, կը զրուատէ զայս « Աւետաբեր Հայաստանի » նուագովն. հայրենիք աստի « Հրաւերներ... » կ'առնու « Ողջուններ, ողջոյն նոր փառաց »... Հարկ չէ բռել, թէ սոյն անմեղութեան եւ գեղեցկութեան յատկանիշ հաւիկն հայրենաց ամէն կողմերը կը զանուին, որ արդէն իսկ ընթերցողաց ծանօթ է. այլ համառօտիւ զիտենք արդ թէ ինչպէս հեղինակներն կը զովեն զայս :

— Սպիտակ եւ անոյշ աղանին ի սուրբ Գիրս յատկապէս յիշատակուած եւ հանդիսացած է : Սաղմութեան կը նուագէ. « Տայր որ ինձ թեւ՝ որպէս զաղանոյ, զի թռչէի, վերանայի, եւ հեռացեալ զազարէի յանապատի\* » : Երգ երգոյն կ'երգէ. « Արի եկ, մերձաւոր իմ, զեղեցիկ իմ, աղանի իմ, եւ եկ զու աղանեակ իմ ընդ հովանեաւ վիմիզ առ պատարաւ պարսպիդ \*\* » :

Այսպիսի եւ այլ վեմբ բացազանութեամբ՝ Եհովայի ընտրեալ թագաւորը՝ շատ անգամ յայտնապէս կու տան աղանոյ գեղեցկութեան, անմեղութեան եւ միամտութեան յատկանիշքը :

Աղանոյ անուամբ՝ զշոյն ուրբինեան Զսպէլ, իւր կենաց վերջին պահուն յերկնաւոր հրաւերի ձայնը կ'առնու. « Եկ, Աղանի իմ, սիրելի իմ » . զայս կը վկայէ ազգային զիւանազպի մը\*\*\* :

— Երկնային մթնոլորտէն սրբնի հողաց սրբարար Հօգին աղանոյ կերպարանօք կ'իջնէ յալիս Յորդանանու այն գերբնական էակին վերեւ, ուր նոյն պահուն կը հաստատէր մկրտութեան սրտաշարժ խորհուրդը. աստ եւ այլուր եւ միշտ՝ հանճարոյ եւ իմաստութեան աղբիւրն կ'առնու այս մեր թռչնեկին կերպարանքը :

Մինչդեռ քրիստոնէութիւնը կը զրուատէ կը փառաւորէ մեր աղանեակը, անդին վատ հեթանոսութիւնը զինքը խոնարհ ստրուկ մի կ'ընէ ամենէն պիղծ եւ վատահամբաւ զիցուհոյն, երբ զայն բազմեցընելով մարդարտազարդ եւ ոսկիապատ կառքի մը վրայ՝ ամպէ յամպ թուցընել կու տայ նորա նագելի թևերով :

Այսքանով հերիքանանք աղանոյ փառաց վրայ ունեցած ծանօթութեամբ. քիչ մ'այլ իւր բարբըր զիտենք :

Սիրուն աղանին սրշափ կը զարմացընէ եւ կը հրապուրէ զմեզ՝ երբ զինքը նկատենք իբր մի քաջ եւ անմոլար սուրհան

\* Աղմ. տ. 7 :  
\*\* Երգ երգոց. Բ. 14 :  
\*\*\* Վահրամ զիւանազպիւր արքունի յիշատակարանաց :